ՀՀ Վայոց ձորի մարզպետ Տրդատ Սարգսյանի գործունեության արդյունքները 01.10.2019-ի դրությամբ

Գյուղատնտեսություն

Մարզում գյուղատնտեսական հողատեսքերը կազմում են **189607.4հա**

- ընդամենը ոռոգվող հողեր՝ - 6622.9 հա
- ընդամենը վարելահող՝ - 15628 հա

որից ոռոգվող՝ - 2599.8 հա

բազմամյա տնկարկներ - 1978.9 հա

- պտուղ՝ - 1036.6 հա
- խաղող՝ - 948.3 հա
- տնամերձ հողեր՝ - 3120 հա

որից բազմամյա տնկարկներ - 1810հա

- պտուղ - 1503հա
- խաղող - 307հա
- բանջար- բոստանային 1310հա
- **Ընդամենը բազմամյա տնկարկներ 3788.9 հա**
- խոտհարք - 5060.8 հա

որից ոռոգվող - 175. հա

- արոտ՝ - 92452 հա
- այլ հողատեսքեր՝ - 74562.3. հա

Մարզի ոռոգելի հողատարածքները կազմում են 6622.9 հա, որից վարելահող՝ 2599.8 հա, կամ ընդհանուր վարելահողերի 17 տոկոսը:

Պետական աջակցության ծրագրերի շրջանակներում, շուկայականից ցածր գներով, ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով մարզի հողօգտագործողներին է հատկացվել գարնանացան գարու 0.95տ, առվույտի 1.124տ, աշնանացան ցորենի 7.44տ, կորնգանի 0.98տ, եգիպտացորենի 0.027տ, սիսեռի **0.056տ սերմացու:**

Գործում են 308, (2019թ ավելացել է 140-ով) ֆերմերային և գյուղացիական տնտեսություններ, որից՝

փոքր տնտեսություններ՝ 234 (2019թ ավելացել է 119-ով)Փոքր տնտեսություններ՝ (1-5 հա պտղատու այգի կամ խաղող, կամ 5-10 հա վարելահող, կամ 0.1-0.5 հա ջերմոց, կամ 20-30 գլուխ խոշոր Եղջերավոր գյուղ. կենդանի, կամ 50-100 գլուխ մանր եղ. գյուղ. Կենդանի,

միջին տնտեսություններ՝ 39 (2019թ ավելացել է 11-ով) Միջին տնտեսություններ՝ (5-10 հա պտղատու այգի կամ խաղող, կամ 10-20 հա վարելահող, կամ 0.5-2.0 հա ջերմոց, կամ 30-60 գլուխ խ. Եղջ. Գյուղ. Կենդանի, կամ 100-150 գլուխ մանր եղ. Գյուղ. Կենդանի)

խոշոր տնտեսություններ՝ 35 (2019թ ավելացել է 9-ով) Խոշոր տնտեսություններ՝ (10-ից ավելի հա պտղատու այգի կամ խաղող, կամ 20-ից ավելի հա վարելահող, կամ 2-

ից ավելի հա ջերմոց, կամ 60-ից ավելի գլուխ խ. Եղջ. Գյուղ. Կենդանի, 150-ից ավելի գլուխ մանր եղ. Գյուղ. Կենդանի):

2018-2019թթ ցանքերի համեմետական վերլուծությունը աղյուսակի տեսքով.

N	ԱՆՎԱՆՈՒՄԸ	Տարածությունը / հա		
		2018թ	2019թ	Տարբ.
1	Հացահատիկ և հատիկ	1907	1755	-152
2	Բանջարեղեն	411	349	-62
3	Բոստան	31	14	-17
4	Կարտոֆիլ	160	124	-36
5	Պտուղ, հատապտուղ	2514	2533.5	19.5
6	Խաղող	1200	1255	55
7	Կերային կուլտուրաներ	1984	1794	-190
8	Տեխնիկական	21	23	2
8	Ընդ.ցանքատարածություն	4480	4060	- 420

01.10.2019-ի դրությամբ արտադրվել է մոտ 3000տ հացահատիկ, կուտակվել է 26000տ խոտ, արտադրվել է 580տ կարտոֆիլ, 1560տ բանջարեղեն, 1570տ պտուղ և հատապտուղ, 150տ խաղող, բերքահավաքի աշխատանքները շարունակվում են:

2019թ հունվարի մեկի դրությամբ մարզում առկա է **18523 գլուխ խոշոր եղջերավոր** անասուն, որից **կովեր՝ 7773** գլուխ, **մանր եղջերավոր՝ 14100 գլուխ, խոզեր՝ 3558 գլուխ**, **թռչուններ՝ 108580 թև** և **մեղվաընտանիք՝ 23821** փեթակ:

2019 թվականի առաջին կիսամյակում անասնաբուժական ծառայությունների կողմից իրականացվել են հետևյալ կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառումները՝

Կանխարգելիչ միջոցառումներ.

Պաստերելիոզ խ.ե.կ.1834 գլուխ, մաշկաբորբ խ.ե.կ 11315 գլուխ , դաբաղ խ.ե.կ 23785 գլուխ, սիբիրախտ խ.ե.կ 21 488գլուխ, դաբաղ մ.ե.կ 6610 գլուխ, խոզերի ժանտախտ 6430 գլուխ, թռչունների ժանտախտ 42685 թև, ձիերի սիբիրախտ 335 գլուխ, մեղուների վարոատոզ 24680 փեթակ:

Ախտորոշիչ միջոցառումներ.
Տուբերկուլյոզ խ.ե. կ 389 գլուխ, բրուցելյոզ խ.ե.կ 9690գլուխ և բրուցելյոզ մ.ե.կ 14800 գլուխ:

Բույսերի պաշտպանության ծրագրով մարզ է ներկրվել 75լ <<Տրիումֆ>> տեսակի թունանյութ և իրականացվել մորեխների դեմ պայքարի անվճար աշխատանքներ:

Մարզի Արենի, Աղավնաձոր, Ռինդ,Գնիշիկ, Գետափ բնակավայրերում առկա է 7 հակակարկտային կայանքներ, /560հա ծածկողականությամբ/, 2019թ Ելփին բնակավայրում տեղադրվել է ևս մեկ կայանք (Կարկտահարության դեմ պայքարի լիարժեք աշխատանքներ իրականացնելու համար անհրաժեշտ են ևս 20 հակակարկտային կայաններ):

ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2019 թվականի հունիսի 19-ի թիվ 57 կարգադրությամբ Վայոց ձոր մարզի հեռագնա արոտավայրերում արոտավայրերի նպատակային և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև կենդանիների վարակիչ հիվանդությունների վերաբերյալ արժանահավատությունն ուսումնասիրելու նպատակով, ստեղծվել է մարզային հանձնաժողով, որը կատարել է հսկայածավալ աշխատանքներ բրուցելյոզ հիվանդության հայտնաբերման և լիկվիդացման ուղղությամբ:

Մարզպետարանում և բոլոր համայնքներում ֆերմերների, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ կազմակերպվել են սեմինարներ և մանրամասն ներկայացվել 2019թ գյուղատնտեսության զարգացմանն ուղղված պետական օժանդակության ծրագրերը:

<<Փոքր և միջին <<խելացի>> անասնաշենքների կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության>> պետական օժանդակության ծրագրով մարզի Զառիթափ և Ելփին համայնքներում կառուցվում են անասնագոմեր:

Մարզի 145 գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին տրամադրվել է 584.7մլն դրամ սուբսիդավորված վարկեր:

Սահմանամերձ համայնքներին կառավարության կողմից անվճար տրամադրվել է գարնանացան մշակաբույսերի սերմացուներ (ցորեն 5տ, եգիպտացորեն 2տ, առվույտ 0.5տ, սիսեռ 0.5տ):

Սահմանամերձ (Խաչիկ, Բարձրունի) համայնքների սոցիալապես անապահով 20 ընտանիքներ ընդգրկված են <<Դիակոնիա>> բարեգործական հիմնադրամի կողմից դրամաշնորհային ծրագրով իրականացվող 2 հա սխտորի մշակության ծրագրում:

Ոչխարաբուծության զարգացման ուղղությամբ կատարվել է 13.500 000 դրամի ներդրում (15.07.2019թ դրությամբ):

Ջերմուկ համայնքի Կարմրաշեն բնակավայրում կատարվել է 100-120 մլն դրամի ներդրում՝ 100գլուխ մսային ուղվածության խոշոր եղջրավոր կենդանի ձեռք բերելու, տիպային անասնագոմի և սպանդանոցի կառուցման համար:

Նախագծային փուլում է Երևան- Մեղրի մայրուղու 120-րդ կիլոմետրի վրա, Գետափ համայնքի վարչական տարածքում գյուղատնտեսական մեծածախ շուկայի կառուցման աշխատանքները:

Աղյուսակում ներկայացվում է մարզում առկա կաթիլային ոռոգման, կարկտապաշտպան ցանցերի,սառնարանային և ջերմոցային տնտեսությունների, հակակարկտային կայանքների վերաբերյալ՝ տեղեկատվություն առ 20.09.2019թ

ուղղվածությունը	2019թ	2018թ	2019 -2018թթ տարբերությունը
Կաթիլային ոռոգում	100.4հա	34.4հա	66հա
պտուղ	9.7հա	4.7հա	5հա
խաղող	90.7հա	29.7հա	61հա
Կարկտապաշտպան ցանց	0.5հա	0.5հա	-
խաղող	0.5հա	0.5հա	-
Սառնարանային տնտեսություն	777 տ	657տ	120տ
Ջերմոցային տնտեսություններ	18802 մ^2	22000 մ^2	-3198 մ^2
Հակակարկտային կայանքներ	8	7	1

20.09.2019թ դրությամբ մատակարարվել է 8.7 մլն մ^3 ջուր, հասույթը կազմում է 95.7 մլն. դրամ, գանձվել է 76մլն դրամ. պարտքը կազմում է 19.7մլն. դրամ:

Քաղաքաշինություն

ՀՀ Վայոց ձորի մարզի առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների վերաբերյալ

27.09.2019թ.

Մարզ	**Համայնք**	**Բնակավայր**	**Խնդրի նկարագրությունը**	**Ծանոթություն**
Վայոց ձոր	Եղեգիս	Արտաբույնք	Խմելու ջրագծի արտաքին ցանցի կառուցում մետաղյա խողովակով	Ընթացքի մեջ է
Վայոց ձոր	Եղեգիս	Գողթանիկ	Դպրոցի շենքի տանիքի վերանորոգում	Ավարտված է
Վայոց ձոր	Եղեգիս	Հորբատեղ	Օրվա կարգավորիչ ջրամբարի հիմնանորոգում	Մրցութային փուլում է
Վայոց ձոր	Եղեգիս	Հորս	Օրվա կարգավորիչ ջրամբարի հիմնանորոգում	Մրցույթը ավարտվել է
Վայոց ձոր	Գլաձոր	Վերնաշեն	Ներքին խմելու ջրի ցանցի վերանորոգում	Մրցույթը ավարտվել է
Վայոց ձոր	Արենի	Ագարակաձոր	Մանկապարտեզի շենքի տանիքի մասնակի նորոգում 3.0 մլն դրամ, ջեռուցման համակարգի կառուցում 7.0 մլն դրամ	Ընթացքի մեջ է
Վայոց ձոր	Արենի	Չիվա	Խմելու ջրի արտաքին ցանցի հիմնանորոգում 2 կմ	Ավարտված է
Վայոց Ձոր	Եղեգնաձոր	Եղեգնաձոր	Թիվ 5 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում առանց տանիքի	Իրականացվել է նոր մրցույթ
Վայոց Ձոր	Եղեգնաձոր	Եղեգնաձոր	Թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում տանիքով	Իրականացվել է նոր մրցույթ
Վայոց Ձոր	Արենի	Արենի, Խաչիկ, Գնիշիկ	Մ2-Արենի-Խաչիկ-Գնիշիկ-Եղեգնաձոր հանրապետական նշանակության ավտոճանապարհի առաջին կիլոմետրում Արենի գյուղի մեջ Արփա գետի վրա կառուցված կամրջի վերանորոգում	Ընթացքի մեջ է

Հայաստանի Տարածքային Հիմնադրամի /ԻՖԱԴ/ միջոցներով Եղեգնաձոր քաղաքում սկսվել է թիվ 1 միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքները 1միլիարդ 169 մլն դրամ նախահաշվային արժեքով: Շինարարության ավարտը նախատեսվում է 2021թ: Ռինդ գյուղում կառուցվում է նոր մանկապարտեզի շենք՝ 129 մլն դրամ նախահշվային արժեքով: Շինարարությունը նախատեսված է ավարտել հոկտեմբերին:

Ճանապարհաշինություն

2019 թվականին ՀՀ Վայոց ձորի մարզի տարածքով անցնող միջպետական նշանակության ավտոճանապարհի հիմնանորոգման և վերանորոգման նպատակով ՀՀ պետական բյուջեի միջոցներով իրականացվում են հետևյալ աշխատանքները.

1. Մ2 – Երևան – Երասխ – Գորիս – Մեղրի – Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 101.4 – կմ 108.4 հատվածի հիմնանորոգում (7.0կմ) - 1.011 մլն. դրամ (աշխատանքները ընթացքի մեջ են, կատարվում են ասֆալտապատման և հողային աշխատանքներ)

2. Մ2 – Երևան – Երասխ – Գորիս – Մեղրի – Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ126.1 - կմ131.5 հատվածի հիմնանորոգում (5.4կմ) - 529.7 մլն. դրամ (աշխատանքները ընթացքի մեջ են, կատարվում են ասֆալտապատման և հողային աշխատանքներ)

3. Մ2 – Երևան – Երասխ – Գորիս – Մեղրի – Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ139.0 - կմ142.0 հատվածի հիմնանորոգում (3.0կմ) - 300 մլն. դրամ աշխատանքները ընթացքի մեջ են, կատարվում են ասֆալտապատման և հողային աշխատանքներ/

Համաշխարհային բանկի միջոցներով նախատեսված աշխատանքներ

1.Մ2 –Գետափ 2.766 կմ -368 մլն.դրամ /աշխատանքները կսկսվեն առաջիկա օրերի ընթացքում /

2.Տ – 9 – 21 (Շատին) - Հորբատեղ 6.5 կմ - 653 մլն. դրամ /կատարվում են վաքերի տեղադրման, գաբիոնային շարվածքների, հենապատերի կառուցման, արհեստական կառուցվածքների, կամուրջների վերանորոգման և հողային աշխատանքներ/

Զարգացման ծրագրեր

2019 ԹՎԱԿԱՆԻՆ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

N	համայնք	ծրագրի անվանումը	ընթացք 03/09/2019թ	ծրագրի ընդհանուր արժեքը	Համայնքի մասնակցությունը	Պահանջվող գումարը
				գումարը	գումարը	գումարը
1	Եղեգնաձոր	Արսենյան 9 և Միկոյան 13 բնակելի շենքերի բակերի նորոգում	Սկսվել են ծրագրի իրականացման աշխատանքները	18 628 300	8 382 735	10 245 565
2		Կամոյի 2 Ա բնակելի շենքի բակի նորոգում	Սկսվել են ծրագրի իրականացման աշխատանքները	15 774 200	7 098 390	8 675 810
3		Անդրանիկի փողոցի նորոգում/ սկիզբը Միկոյան-Անդրանիկ փողոցների խաչմերուկ/	Սկսվել են ծրագրի իրականացման աշխատանքները	14 893 200	6 701 940	8 191 260
4		Լևոնյան և Բաղրամյան փողոցների լուսավորության ցանցի նորոգում	Սկսվել են ծրագրի իրականացման աշխատանքները	12 296 000	5 000 000	7 296 000
5		Գլաձորյան փողոցի հատվածի նորոգում	Սկսվել են ծրագրի իրականացման աշխատանքները	13 866 800	6 240 060	7 626 740
6	Արենի	Արենի համայնքի Արենի, Աղավնաձոր, Արփի, Չիվա և Ռինդ բնակավայրերում փողոցների փոսային լցում ասֆալտով կամ ասֆալտապատում	Սկսվել են ծրագրի իրականացման աշխատանքները	158,252,870	70,000,000	88,252,870
7		Արենի համայնքի Արփի բնակավայրում կոյուղագծի կառուցում և հիմնանորոգում	Սկսվել են ծրագրի իրականացման աշխատանքները	12,702,960	5,000,000	7,702,960
8		Արենի համայնքի Արփի բնակավայրում նախկին ճաշարանի շենքի չվերանորոգված հատվածի հիմնանորոգում	մրցույթ չի հայտարարվել,շենքի տեխնիկական վիճակի ուսումնասիրման փուլ	12,972,154	7,783,292	5,188,862
9		Արենի համայնքի Արփի բնակավայրի մանկապարտեզի շենքի 2 բաց պատշգամբների հիմնանորոգում և ծածկերի կառուցում	մրցույթ չի հայտարարվել,շենքի տեխնիկական վիճակի ուսումնասիրման փուլ	7,962,040	5,000,000	2,962,040

10		Արենի համայնքի Աղավնաձոր Արփի և Ելփին բնակավայրերում խմելու ջրագծերի վերակառուցում	Սկսվել են ծրագրի իրականացման աշխատանքները	19,295,245	6,600,149	12,695,096
11		Արենի համայնքի Ագարակաձոր, Աղավնաձոր, Չիվա և Ռինդ բնակավայրերում ոռոգման ջրագծերի հիմնանորոգում և կառուցում	Սկսվել են ծրագրի իրականացման աշխատանքները	84,097,540	26.859.000	56,190,019
12		Արենի համայնքի Ագարակաձոր, Աղավնաձոր, Արփի, Ելփին և Չիվա բնակավայրերում պուրակների կառուցում	մրցույթ չի հայտարարվել	40,498,850	23,890,659	16,608,191
13	Վայք	Վայք քաղաքի ներհամայնքային փողոցների և մայթերի ասֆալտբետոնե ծածկի վերանորոգման աշխատանքներ	մրցույթ չի հայտարարվել	11 222 000	5,050,000	6 172 000
14		Վայք համայնքի կարիքների համար ֆոտովոլտային կայանի կառուցում	Ավարտվել են ծրագրի իրականացման աշխատանքները	15 428 640	6,171,456	9 257 184
15		Արին բնակավայրի գիշերային լուսավորության վերականգնումԱրին բնակավայրի գիշերային լուսավորության վերականգնում	մրցույթ չի հայտարարվել	12 750 340	5,100,000	7 650 340
16	Ջերմուկ	Զատիկ մանկապարտեզ ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի Ձախափնյա թաղամասի մասնաշենքի ձմ. այգու, Կեչուտի մասնաշենքի 2 հարկերի, տանիքի և <<Գնդեվազի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի տանիքի հիմնանորոգում	Սկսվել են ծրագրի իրականացման աշխատանքները	72475520	25367000	49108520
17		Ջերմուկ քաղաքի մարզադպրոցի մասնաշենքի հիմնանորոգում և արդիականացում	Սկսվել են ծրագրի իրականացման աշխատանքները	48902640	26897000	22005640

18	Զառիթափ	Սերս և Բարձրունի գյուղերի ջրագծերի գլխամասային կառույցների ,ջրագծերի ներքին և արտաքին ցանցերի կապիտալաշխատանքներ	Կատարվել է աշխատանքների 90%-ը:	58.525.000	17.557.500	40 967500
19		Զառիթափ բնակավայրի գազատար ներքին ցանցի կառուցում	Ավարտվել են ծրագրի իրականացման աշխատանքները	45.940.900	18 376360	27 564540
20	Մալիշկա	Ներհամայնքային փողոցների մասնակի ասֆալտապատում	Սկսվել են ծրագրի իրականացման աշխատանքները	29,496,000	13,273,200	16222800
21	Եղեգիս	Ոռոգման խողովակաշարի կառուցում	Սկսվել են ծրագրի իրականացման աշխատանքները	75.683.100	26.483.085	49 200 015
22		Շատին բնակավայրի Մանկապարտեզի վերանորոգմ. աշխատանքներ	Սկսվել են ծրագրի իրականացման աշխատանքները	42.951.362	17.180.545	25 770 817
23		Թառաթումբ,Եղեգիս և Արտաբույնք գյուղերի փողոցային լուսավ. կառուցում	Սկսվել են ծրագրի իրականացման աշխատանքները	34,808,790	13,923,516	20 885 274
24	Գլաձոր	Գլաձոր համայնքի Գետափ և Վերնաշեն բնակավայրերում, մանկ. Խաղահրապ. կառուցում	Սկսվել են ծրագրի իրականացման աշխատանքները	19,623	11,773,776	7,849,184
25		Գլաձոր համայնքի ՝ Գետափ բնակավայրում այլընտրանքային արևային ֆոտովոլտային համակարգի տեղադրում	մրցույթ չի հայտարարվել	12,708,000	5,718,600	6,989,400
26		Գլաձոր համայնքի՝ բնակավայրերի, ներքին ճանապարհների խճապատում և բարեկարգում:	Մրցույթը չի հայտարարվել	11,836,500	5,326,425	6,510,075
27		Գլաձոր համայնքի՝ Գլաձոր, Գետափ և Վերնաշեն բնակավ, գազիֆիկացում	մրցույթ չի հայտարարվել	66,246,600	26,498,640	39,747,960
28		Գլաձոր համայնքի՝ Գլաձոր, Գետափ և Վերնաշեն բնակավ. գազիֆիկացում	մրցույթ չի հայտարարվել	23,380,600	14,028,360	9,352,240
				1 008 621 651	**418 475 178**	**590 146 453**
				100%	**42.20%**	**57.80%**

Վայոց ձորի մարզում 2018թ հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին սուբվենցիոն ներդրումային 8 ծրագրեր իրականացվել են մարզի 6 համայնքներում 194,3 մլն դրամի չափով:

Վայոց ձորի մարզում <<Թուֆեկյան հոսփթալիթի>> ՍՊԸ-ի կողմից կառուցվում է 360 անձի համար նախատեսված հյուրանոցային համալիրը: Ներդրումների ընդհանուր ծավալը կազմում է 8 մլդ դրամ: 2021թվականին շինարարության ավարտից հետո կստեղծվի 80 նոր աշխատատեղ:

Գլաձոր համայնքում Եվրոմիության միջոցներով կառուցվել է ֆոտովոլտային էլեկտրոկայան 1ՄԳԲՏ հզորությամբ, արժեքը՝ 800 հազար եվրո, այս պահին աշխատում է 14 մարդ:

Մարզի Եղեգիս համայնքի <<Արևի>> հյուրանոցում կատարվել են 10,3 մլն դրամի վերանորոգման աշխատանքներ:

Առողջապահություն և սոցիալական ապահովություն

- Մարզային առողջապահական հաստատությունների ֆինանսավորման համար հատկացվել է՝
2019թ.–ին 767467.9 հազ. դրամ: 2019թ. վճարովի ծառայությունը կազմել է մոտ 49115.7 հազ դրամ, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում եղել է 38168.3 հազ.դրամ (աճը կազմում է 10947.4 հազ. դրամ):

- 2019թ.-ին ընթացքում պետական պատվերով բուժման և հետազոտման համար մարզին հատկացված 56 տեղից ուղեգրող հանձնաժողովի կողմից հանրապետության բուժհաստատություններ պետական պատվերով բուժման և հետազոտման են ուղեգրվել 32 քաղաքացի, առողջարանային վերականգնողական բուժման են ուղեգրվել 6 մեծահասակ և 4 երեխա:

- 2019 թվականին պոլիկլինիկաներում և ամբուլատորիաներում աշխատող բժիշկների աշխատավարձերը բարձրացվել են 15%-30%-ով:

- 2019 թ. ընթացքում հաշվառվել է 237 ծնունդ, ցավոք 2018 թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 22-ով:

- Մարզի հիվանդանոցային բժշկական հիմնարկները համալրվել են շտապ օգնության 5՝ 1 ռեանիմոբիլ և 4 գծային մեքենաներով, բժշկական սարքավորումներով և գույքով:

- <<**Ե**ղեգնաձորի ԲԿ>> ՓԲԸ- ն վերանորոգել է ռենտգեն կաբինետը, ձեռք է բերել Ռենտգեն սարքավորում, ԷԿԳ-ի պարատ: Ծննդատանը հատկացվել է նորածինների լսողության սուգման ապարատ:

- 2019թ. նախատեսվում է կառուցել մարզային նոր բժշկական կենտրոն, որի համար արդեն հատկացվել է հողատարածք և իրականացվել են հողային աշխատանքներ: Նախատեսվում է շինարարությունն ավարտել 2022 թվականին:

- ՄՊՎ-ի դեմ պատվաստումների ներդրման գործընթացը, հանրային իրազեկման աշխատանքները լիարժեք կազմակերպելու և իրականացնելու համար ստեղծվել է համակարգող խորհուրդ, որի աշխատանքների արդյունքում բուժաշխատողների համար և դպրոցներում կազմակերպվել են խորհրդակցություններ:

- Մարզում <<Լույս հայի աչքերին>> ծրագրի շրջանակներում իրականացվել է մասնագետների այց սահմանամերձ 4 գյուղեր: Բուժման կարիք ունեցող բնակիչները հերթագրվել են հետագայում նույն ծրագրի շրջանակներում վիրահատվելու համար:

- Քաղաքացիների կողմից ներկայացված դիմում- բողոքներն ուսումնասիրվել են առողջապահության և սոցիալական ապահովության վարչության և մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի կողմից: Բարձրացված խնդիրներին տրվել են և կտրվեն համապատասխան լուծումներ:

Սոցիալական ոլորտ

2019 թվականի ընթացքում նպաստ է ստացել 1933 ընտանիք, որից ընտանեկան նպաստ՝ 1438 և սոցիալական նպաստ՝ 495 ընտանիք: Վճարվել է 532,4 մլն դրամ նպաստ: Հրատապ եռամսյակային օգնություն է ստացել 102 ընտանիք, վճարվել է 15 մլն դրամ: Ավանդների փոխհատուցում է ստացել 402 մարդ՝ վճարվել է 65,4 մլն. դրամ:

Մարզում կենսաթոշակառուների թիվը 9263 է, որոնց վճարվել է շուրջ 3 մլրդ. դրամ կենսաթոշակ:

Մարզի զբաղվածության տարածքային կենտրոններում գրանցվել է 939 գործազուրկ: Աշխատանքի է տեղավորվել 226 մարդ:

2019թ. հաշվառվել է բնակարանի բարելավման կարիք ունեցող 1 հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայող: Հաշվառված է ընդամենը 43 ընտանիք:

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով 562 քաղաքացիների հատկացնել 25 մլն դրամ դրամական օգնություն:

Մշակույթ և սպորտ

1. Ս/թ օգոստոսի 5-ից 17 ը Հայաստանի և Արցախի հանրապետություններում անցկացվեցին Համահայկական ամառային 7-րդ խաղերը: Խաղերին մասնակցեցին նաև մեր մարզի բոլոր համայնքներից թվով 90 մասնակիցներ:
2. Ս/թ օգոստոսի 27-ից 30-ը Ծաղկաձոր քաղաքում անցկացվեց <<Հաշմադամություն ունեցող լավագույն մարզիկ>> մրցույթը: Մրցույթին մասնակցեց նաև մեր մարզի հավաքականը և թիմային հաշվարկում գրավեց 6-րդ տեղը:

3. Ս/թ տեպտեմբերի 3-6 ը ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքում անցկացվեց <<ՀՀ գյուղական մարզական խաղեր>> մրցույթը, որին մասնակցեցին նաև մեր մարզի թվով 10 մարզիկներ, որտեղ ունեցանք մեկ ոսկե և երեք արծաթե մեդալներ: Թիմը ընդհանուր հաշվարկում գրավեց 4-րդ տեղը:
4. Ս/թ մայիսի 28-ին մարզի բոլոր համայնքներում, պատմամշակութային հուշարձաններում անցկացվեցին հանրապետության 101- ամյակին նվիրված սանիտարական մաքրման աշխատանքներ, որից հետո երեկոյան ամֆիթատրոնում կազմակերպվեց հայրենասիրական երգերի և պարարվեստի փառատոն:
5. Հունիսի 1-ին երեխաների պաշտպանության օրվան նվիրված կազմակերպվեցին մասսայական միջոցառումներ՝ կավճանկարչություն, մարզական սպորտլանդիաներ, <<Լավագույն նախադպրոցական հաստատություն>> մրցույթի եզրափակիչ փուլը, որտեղ հաղթող ճանաչվեց Եղեգնաձորի թիվ 1 մանկապարտեզը, որն էլ հունիսի 20-21-ը մասնակցեց եզրափակիչ՝ հանրապետական փուլին և գրավեց 4-րդ տեղը:
   Հունիսի 1-ին երեխաների համար կազմակերպվեց տոնական համերգ:
6. Ս/թ հունիսի 5-ին ՀՀ պետական դրոշի և ՀՀ պետական խորհրդանշանների օրերին նվիրված միջոցառումներ կազմակերպվեցին մարզկենտրոնում և մարզը 100 հոգանոց պատվիրակությամբ մասնակցեց Երևանում կազմակերպված մասսայական միջոցառմանը:
7. Ս/թ սեպտեմբերի 6-ին Թանահատի վանահամալիրում և Եղեգնաձոր քաղաքում կազմակերպվեց մեծ տոնակատարություն նվիրված Գլաձորի 735-ամյակին: Միջոցառմանը մասնակցում էին Վայոց ձորի մարզպետը, Հայաստանից և սփյուռքից գիտնականներ և այլոք:

Կրթություն

8. Կազմակերպվել է զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների, ծնողազուրկ և սակավ ապահոված ընտանիքների 190 երեխաների ամառային հանգիստը Հանքավանի <<Հասմիկ>> ճամբարում:
9. Ժամանակին ստացվել և դպրոցներին է բաշխվել 2019-2020 ուտարվա դասագրքերը:
10. Ժամանակին ստացվել և դպրոցներին է բաշխվել 2019-2020 ուտարվա դասամատյանները:
11. Կազմվել և ԿԳՄՍ նախարարություն է ներկայացվել մեկնարկող ուստարվա աշակերտական համակազմը:
12. Ընթացքի մեջ է նոր ուստարվա տարիֆիկացիոն ցուցակների կազմումը:

Զբոսաշրջություն

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժինը Տուրիզմի տարածաշրջանային կենտրոնի հետ մշակվել է հյուրատների զարգացման ծրագիր, որի մրցույթը հայտարարվել է և 25 հյուրատների ներդրումային ծրագրերը կֆինանսավորվեն նոյեմբեր ամսին:

Մարզում զբոսաշրջության առավել զարգացման և աշխուժացման նպատակով մշակվել են ներդրումային ծրագրեր և ներկայացվել ՀՀ կառավարություն, ինչպիսիք են՝ Նորավանքի կիրճի, Արենի գյուղի և Մոզրովի քարանձավի ներդրումային ծրագրերը:

Այժմ զբոսաշրջության պետական կոմիտեի հետ համատեղ մշակվում են Վայոց ձորի տուրիստական այլընտրանքային եղանակների զարգացման ուղղությունները, հեռանկարները և իրականացման ռազմավարությունը:

<<20 անիրանականանալի իրականություն>> ծրագրում ներառված է Վայոց ձորից պատմամշակության և տեսարժան վայրերի 6 օբյեկտ: Տվյալ ծրագրի շրջանակներում բաժնի և Զբոսաշրջության պետական կոմիտեի հետ համատեղ մշակվել են ենթակառուցվածքների ստեղծման, տուրիստական փաթեթների պատրաստման նախագծերը:

Թուֆենկյան հիմնադրամի կողմից Արենի գյուղում հյուրանոցային համալիրի կառուցման գործում բաժինն աջակցել է պետության կողմից անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծմանը:

Փետրվար ամսին բաժինը կազմել է զբոսաշրջության զարգացման 9 գործարար ծրագիր և ներկայացրել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, որից 2-ն արդեն ֆինանսավորվել է:

Բաժնի մշտական ուշադրության կենտրոնում է գտնվում բազմակողմանի համագործակցային հարաբերությունների զարգացումն ու խորացումը հետևյալ պետությունների հետ՝ Իրանի Իսլամական Հանրապետություն (Ուրմիա նահանգ),ՌԴ (Նիժնի-Նովգորոդի Արխանգելսկի մարզ), Բելոռուսիայի Հանրապետություն (Մինսկի մարզ):

Համաձայնագիր է կնքվել՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ և Չեխիայի Հանրապետության Կարլովի Վարի քաղաքների միջև, ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք քաղաքի և ՌԴ Բակաու նահանգի Թրգու Օկնա քաղաքի միջև, ՀՀ Վայոց ձորի մարզի

Արենի համայնքի և Ֆրանսիայի Հանրապետության Պրովան-Ալպ-Կոդ դ՝ Ազյուր շրջանի Վար դեպարտամենտի Բանդոլ քաղաքի միջև:

Յուրաքանչյուր հանդիպման ժամանակ քննարկվել է զբոսաշրջության ոլորտում համագործակցության հարցը, որի արդյունքում համաձայնություն է ձեռք բերվել ՌԴ Արխանգելսկի մարզի հետ՝ տուրիստական կենտրոններ հիմնել ՀՀ Վայոց ձորի և ՌԴ Արխանգելսկի մարզերում, մարզում զբոսաշրջությունը կխթանելու նպատակով:

2019 թվականին զբոսաշրջության զարգացմանն ուղղված ծրագրեր

1. 2018 թվականին սկսվել են թվով 28 հյուրանոցների վերանորոգման աշխատանքներ, որոնք այժմ ընթացքի մեջ են և նախատեսվում է ավարտին հասցնել 2019 թվականին:
2. Եվրամիության միջոցներով կառուցվում է արևային էլեկտրակայան, որի շինարարությունը կավարտվի 2019 թվականին: Ստացված շահույթը կօգտագործվի մարզում զբոսաշրջության զարգացման նպատակով:
3. Մարզպետարանի կողմից մշակվել են Մոզրովի քարանձավի շահագործման, Եղեգիսի կիրճի զարգացման ներդրումային ծրագրերը, որոնց իրականացման համար նախատեսվում են բանակցություններ են վարվում ներդրողների հետ:
4. Նախատեսվում է մշակել այնպիսի ծրագրեր, որոնց միջոցով կխթանվի Վայոց ձորի զբոսաշրջությունը տարվա բոլոր եղանակներին:

5. 2019 թվականի երկրորդ կիսամյակում նախատեսվում է կազմակերպել մեծ ֆորում-կլոր սեղան, որին հրավիրվելու են մարզի հյուրանոցների, հյուրատների, զբոսաշրջային տների ներկայացուցիչները: Նախատեսվում է աշխատանք կատարել ՝ բարելավվելու մատուցվող ծառայությունների որակը բարձրացնելու նպատակով, որն ավելի կգրավի զբոսաշրջիկների ուշադրությունը:

6. Նախատեսվում է ստեղծել Տուրիստական Տեղեկատվական Կենտրոնի (ՏՏԿ) Ջերմուկ քաղաքում:
7. Իրականացնել միջհամայնքային և ներհամայնքային (գյուղական) տուրիզմի զարգացումը խթանող միջոցառումներ՝ ԲԲ հյուրատների ստեղծում Ջերմուկ համայնքի գյուղերում

8. 2019 թվականին զբոսաշրջության ոլորտում Եղեգիս համայնքում ԵՄ-ի հետ համագործակցության ծրագիր:
9. Կազմակերպվել են ամենամյա գաթայի փառատոնը և Արենի գինու Գինու փառատոնը:

ՏԻՄ ոլորտ

Հաշվետու ժամանակաշրջանում համագործակցված աշխատանքներ են տարվել հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների հետ, ապահովվել է մարզի կապի, էներգետիկայի, հարկային, արտակարգ իրավիճակների, զինկոմիսարիատների, ոստիկանության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների հետ :

Համակարգվել է 2019 թվականի մարտի 23-ին և հունիսի 8-ին կայացած համապետական շաբաթօրյակների կազմակերպման աշխատանքները և համապատասխան տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 05.06.2019 թվականի թիվ 01/15.1/5367-19 հանձնարարականի պահանջների՝ նախարարություն է ներկայացվել համայնքների (բնակավայրերի) մասով համայնքների վարչական տվյալների շտեմարանով պահանջված տեղեկատվությունը:

ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի թիվ 214-Ա որոշման համաձայն համայնքներին տրամադրվել է տեղեկատվություն 01.01.2019 և 01.07.2019 թվականի դրությամբ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության բնակչության պետական ռեգիստրում հաշվառված քաղաքացիների տվյալների վերաբերյալ:

2019 թվականի ընթացքում համակարգվել է համայնքների տնտեսական զարգացման պատասխանատուների համակարգի ձևավորմանն ու կարողությունների զարգացմանն ուղղված աշխատանքները:

Ներկա պահին մարզի բոլոր 8 համանքներն ունեն հաստիքային կամ պայմանագրային հիմունքներով ընդունված աշխատակիցներ, որոնք կոչված են համայնքում տնտեսական զարգացման համակարգի ձևավորմանն ու կարողությունների զարգացմանն ուղղված աշխատանքների կատարման ապահովմանը:

Տնտեսական զարգացման պատասխանատուների կարողությունների ձևավորման ուղղությամբ կատարված աշխատանքների առումով մարզի 8 համայնքների տնտեսական զարգացման ոլորտային պատասխանատուների հետ

արդեն իսկ իրականացվել են մի շարք քննարկում-խորհրդակցություններ, որոնք ըստ էության պրակտիկ աշխատանքների մեջ նրանց ներգրավման հետ միաժամանակ, հանդիսացել են նաև կարողությունների զարգացմանը միտված միջոցառումներ:

Հետևողական միջոցներ են ձեռնարկվել մարզի համայնքների 2019 թվականի տարեկան աշխատանքային պլանների հաստատման ուղղությամբ: Մարզի 8 համայնքներում 2019 թվականի մարտի 31-ի դրությամբ սահմանված կարգով հաստատվել են 2019 թվականի ՏԱՊ-երը, որոնք բխում են համայնքների զարգացման ծրագրերի 2019 թվականի համար նախատեսված միջոցառումներից:

Տարվել են աշխատանքներ ՏԻՄ օրենքի պահանջների կատարման նպատակով ավագանու նիստերի հրավիրման ժամկետների պահպանման, ընդունված որոշումները օրենքով սահմանված ժամկետում մարզպետարան ներկայացնելու, որոշումները ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու, ընդունված իրավական ակտերի և բյուջեների հրապարակայնության ապահովման ուղղությամբ :

Համակարգվել է ՀՀ Սահմանադրությանը և ընթացիկ օրենսդրությանը հակասող մարզի ՏԻՄ-երի կողմից ընդունված որոշումները մարզպետի պահանջով վերանայելու գործընթացը:

Համակարգվել են համայնքային բյուջեների կատարման ընթացքի վերաբերյալ համայնքների ղեկավարների կողմից ավագանուն տրված եռամսյակային հաղորդումների և տարեկան հաշվետվությունների տրման աշխատանքները:

Հետևողական աշխատանքներ են տարվել համայնքներում ՏԻՄ-երի գործունեության հրապարակայնության ապահովման ուղղությամբ: Այդ նպատակով մարզի բոլոր համայնքներում տեղադրվել են ցուցատախտակներ, տեղեկատվությունը տեղադրվել է համայնքների պաշտոնական կայքերում, որոնց միջոցով համայնքների ազգաբնակչությունը իրազեկվում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության վերաբերյալ :

Հետևողական աշխատանքներ են տարվել համայնքների ավագանիների դերակատարության ու պատասխանատվության բարձրացման ուղղությամբ: Համայնքի ղեկավարների և ավագանիների կողմից կազմակերպվել է քաղաքացիների ընդունելություն և հանդիպում համայնքի բնակչության հետ :

Համայնքներում իրականացված միջոցառումների վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել ամսական, եռամսյակային և կիսամյակային հաշվետվություններ: Մասնավորապես՝

<u>Ամսական հաշվետվությունների մասով.</u>

<u>Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 10.02.2017 թվականի թիվ 01/15/685-17 հանձնարարականի պահանջների ՀՀ</u>

տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն մարզի ավտոմոբիլային ճանապարհներին հարող տարածքներում կուտակված աղբի մաքրման աշխատանքների վերաբերյալ,

Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման նախարարի 10.07.2008 թվականի թիվ 10-1899 և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 09.06.2015 թվականի թիվ 1/34.1/7636-15 հանձնարարականների պահանջների ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն մարզի համայնքներում համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար հայտարարված մրցույթների արդյունքների վերաբերյալ,

Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 17.01.2018 թվականի թիվ 01/16.1/205-18 հանձնարարականի պահանջների ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն խոշորացված համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների և աշխատակազմերի գործունեության կազմակերպման ընթացքում ներկայացվող ուղեցույցի դրույթների կիրառման նկատմամբ սահմանված հսկողության արդյունքների վերաբերյալ:

Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 21.03.2019 թվականի թիվ 01/17.1/2349-19 հանձնարարականի պահանջների ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն ՀՀ Վայոց ձորի մարզի համայնքների ղեկավարների, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների և համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների չօգտագործված արձակուրդների վերաբերյալ:

Եռամսյակային հաշվետվությունների մասով.

Ի կատարումն ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարարի 24.05.2010 թվականի թիվ 01/16/3030-10 հանձնարարականի և ի կատարումն ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների ծրագրի 72.6 կետի 3-րդ ենթակետի պահանջների ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն համայնքների ղեկավարների և ավագանու կողմից կազմակերպված ընդունելություններին մասնակցած քաղաքացիների թվաքանակի վերաբերյալ,

Ի կատարումն ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարարի 11.08.2010 թվականի թիվ 01/16/4439-09 հանձնարարականի պահանջների ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն մարզի համայնքների բյուջեների, բյուջեների եռամսյակային և

տարեկան հաշվետվությունների, բյուջեներում կատարվող փոփոխությունների, համայնքների ավագանիների դերակատարության ու պատասխանատվության բարձրացման վերաբերյալ,

Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 18.01.2019 թվականի թիվ 01/16.2/276-19 հանձնարարականի պահանջների ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն խոշորացված համայնքներում էլեկտրոնային եղանակով իրականացվող գործառույթների և տրամադրվող ծառայությունների վերաբերյալ:

Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 24.05.2018 թվականի թիվ 01/16.1/3016-18 հանձնարարականի պահանջների ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն ՀՀ Վայոց ձորի մարզի խոշորացված համայնքների վերաբերյալ:

Կիսամյակային հաշվետվությունների մասով.

Ի կատարումն ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի 25.06.2013 թվականի թիվ 02/26.3/9056-13 հանձնարարականի և ՀՀ կառավարության 30.11.2006 թվականին կայացած նիստի թիվ 47 արձանագրության 32-րդ կետի 1-ին մասի բ/ ենթակետի հանձնարարականի պահանջների ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել տեղեկատվություն ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների և կրոնական կազմակերպությունների փոխհարաբերությունների վերաբերյալ,

Ի կատարումն ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարարի 09.04.2014 թվականի թիվ 01/15/1841-14 հանձնարարականի և ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի թիվ 303-Ն որոշմամբ հաստատված ժամանակացույցի 32-րդ կետի պահանջների ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի, տեղական ինքնակառավար-ման մարմինների և քաղաքացիական հասարակության հետ համագործակցության վերաբերյալ,

Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 18.10.2018 թվականի թիվ 01/17.1/8201-18 հանձնարարականի պահանջների ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն ՀՀ կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 27-ի N 1017-Լ որոշման թիվ 2 հավելվածի 14, 15, 16, 17, 18 և 19-րդ կետերով ներկայացված միջոցառումների կատարման վերաբերյալ:

Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 19.01.2018 թվականի թիվ 15-Ա հրամանով հաստատված աշխատանքային ծրագրի և ՀՀ Վայոց ձորի մարզպետի 08.05.2018 թվականի թիվ 5 որոշման պահանջների հոկտեմբերի 8-ից 19-ը իրավական և մասնագիտական հսկողություն է իրականացվել ՀՀ Վայոց ձորի մարզի Զառիթափ համայնքում:

Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 21.12.2018 թվականի թիվ 364-Ա հրամանով հաստատված աշխատանքային ծրագրի և ՀՀ Վայոց ձորի մարզպետի 10.05.2019 թվականի թիվ 23 որոշման պահանջների 2019 թվականի մայիսի 13-ից 24-ը իրավական և մասնագիտական հսկողություն է իրականացվել ՀՀ Վայոց ձորի մարզի Գլաձոր համայնքում:

Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 21.12.2018 թվականի թիվ 364-Ա հրամանով հաստատված աշխատանքային ծրագրի և ՀՀ Վայոց ձորի մարզպետի 09.08.2019 թվականի թիվ 40 որոշման պահանջների 2019 թվականի սեպտեմբերի 19-ից 30-ը իրավական և մասնագիտական հսկողություն է իրականացվել ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքում:

Իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքում հայտնաբերված թերությունների վերաբերյալ կազմվել են արձանագրություններ:

Հսկողության ժամանակ արձանագրվել են թերություններ և բացթողումներ <<Տեղական ինքնակառավարման մասին>> , <<Համայնքային ծառայության մասին>>, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>>, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>>, <<Թափոնների մասին>>, <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին>>, <<Քաղաքացիական պաշտպանության մասին>>, <<Քաղաքաշինության մասին>>, <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքների, ՀՀ Հողային օրենսգրքի, ՀՀ կառավարության մի շարք որոշումների և ՀՀ կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմինների ղեկավարների կողմից ընդունված մի շարք հրամանների պահանջների կատարման ուղղությամբ:

Թերությունների և բացթողումների վերաբերյալ սահմանված կարգով կազմվել են արձանագրություններ, քննարկվել և սահմանվել են ժամկետներ թերությունների վերացման ուղղությամբ:

Կազմված արձանագրությունները և հայտնաբերված խախտումները սահմանված ժամկետում ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն և տեղադրվել են մարզպետարանի պաշտոնական կայքում:

Ընդունվել են միգրացիայի հետ խնդիր ունեցող քաղաքացիների դիմումներ՝ դիմումներին տրվել է ընթացք սահմանված կարգով:

2019 թվականի ընթացքում համակարգվել է համայնքապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայության թափուր պաշտոնների մրցույթների հայտարարման գործընթացը: Մարզի համայնքներում 2018 թվականի հոկտեմբեր ամսից 2019 թվականի հոկտեմբեր ամիսը ընկած ժամանակահատվածում համայնքային ծառայության 24 թափուր պաշտոնների համար հայտարարվել են մրցույթներ, որոնց արդյունքում համալրվել է 16 պաշտոն:

2019 թվականի ընթացքում 3 համայնքի ղեկավար և 15 ավագանու անդամներ վերապատրաստվել են:

2018 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ համայնքային ծառայության պաշտոնների թիվը 142 է:

Հաշվետու ժամանակաշրջանում համագործակցված աշխատանքներ են տարվել ԱԺ և ՏԻՄ ընտրությունների կազմակերպման ուղղությամբ.

Համակարգվել է 2018 թվականի դեկտեմբերի 9-ին կայացած Ազգային Ժողովի արտահերթ ընտրությունների գործընթացը, 2019 թվականին փետրվարի 17-ին Մալիշկա համայնքի ղեկավարի արտահերթ ընտրությունների գործընթացը: Իրականացվել է ընտրությունների նախապատրաստման, կազմակերպման և անցկացման աշխատանքների նկատմամբ վերահսկողություն:

Կազմակերպվել են մարզպետի այցելություններ մարզի համայնքներ: Համակարգվել են այցելությունների ընթացքում բարձրացված խնդիրների կարգավորման աշխատանքները:

2019 թվականի ընթացքում աշխատանքային պլաններին համաձայն և ըստ անհրաժեշտության առողջ համագործակցություն է ապահովել հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների հետ: Համագործակցելով ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Վայոց ձորի մարզային վարչության հետ՝ նախապատրաստվել և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի համաձայնեցմանն է ներկայացվել <<ՀՀ Վայոց ձորի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2019 թվականի հիմնական միջոցառումների պլանը հաստատելու մասին>> ՀՀ Վայոց ձորի մարզպետի որոշման նախագիծը:

ՀՀ ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության հետ համատեղ 2019 թվականի համար մշակվել է ոստիկանության մարզային վարչության և ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ղեկավար կազմի հետ հանդիպումների պլան գրաֆիկ:

Վերոնշյալ գրաֆիկի համաձայն 2019 թվականի մարտի 29-ին, հունիսի 28-ին և սեպտեմբերի 27-ին մարզպետարանի ղեկավար կազմի և ոստիկանության աշխատակիցների հետ կայացել է հանդիպում, որտեղ ոստիկանության կողմից տրվել է հաղորդում իրականացված աշխատանքների վերաբերյալ: